

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԾԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԱՂԱՔԵԿԻ

ՊԱՏՏՈՒՅԵՂՁԻ ՀԱՄԱՃԱՆՐԱԿԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎՁ.00.03 - «Կենդանիների վարակիչ հիվանդություններ, սանիտարական փոփոխանություն, զոոհիգիենա» մասնագիտության անասնաբուժական գիտությունների բիկնածուի գիտական աստիճանի ռաջման ստեղծագործության

ՆԵՐԱԿԻՐ

Երևան-2009

ГОСУДАРСТВЕННЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

МУСАЕЛЯН НОРАЙР АГАБЕКОВИЧ

ИЗУЧЕНИЕ ЭПИЗООТОЛОГИИ ПАСТЕРЕЛЛЕЗА В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата ветеринарных наук по специальности 16.00.03 - „Заразные болезни животных: санитарная экспертиза, зоогигиена„

Ереван 2009

Արևմտախոտաբանական բնձան հաստատվել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում

Գիտական ղեկավար՝

անասնաբուժական գիտությունների դոկտոր պրոֆեսոր՝ Ս.Լ. Գրիգորյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Վ.Վ. Արախամյան
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ռ.Չ. Մարտիրոսյան

Աջակցող կազմակերպություն

ՀՀԳՆ «Անասնաբուժության և անասնաբուժության գիտական կենտրոն» ԳՈԱԿ

Պաշտպանությունը կախանալու է 2009թ. դեկտեմբերի 15-ին, ժամը 13³⁰-ին Հայաստանի պետական ագրարային համալսարանում գործող ԲՈՒՀ-ի 022 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող. 74

Արևմտախոտաբանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական ագրարային համալսարանի գրադարանում:

Անդամագիրն առաքված է «13» նոյեմբերի 2009թ.

Ասանագիտական խորհրդի գիտական քարտուղար

ան.գ.թ., դոցենտ

Վ.Վ. Աբրահյան

Тема диссертации утверждена в Государственном аграрном университете Армении

Научный руководитель՝

доктор ветеринарных наук, профессор,
С.Л. Григорян

Официальные оппоненты՝

доктор ветеринарных наук, профессор,
В. В. Абрамян кандидат

биологических наук, доцент,

Р.Չ. Мартиросян

Ведущая организация ГНКО «Научный центр животноводства и ветеринарии»,
Министерства сельского хозяйства РА

Защита диссертации состоится 15 декабря 2009г. 13³⁰ ч на заседании специализированного совета 022 ВАК при Государственном аграрном университете Армении по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74

С диссертацией можно ознакомиться в библиотеке Государственного аграрного университета Армении.

Автореферат разослан «13» ноября 2009г.

Ученый секретарь специализированного совета,
канд. вет. наук, доцент

А.М. Бадалян

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Թեմայի արդիականությունը: Պաստերեյլոզը շոշափելի տնտեսական վնաս է հասցնում անասնապահությանը: Վարակի նկատմամբ անապահով տնտեսություններում խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի հիվանդացության գործակիցը կազմում է 0,42, իսկ թռչուններինը 0,85 (И. Н. Никитин, В. Ф. Воскобойник, 1999): Անկումները զանգվածային բնույթ են կրում նշված կենդանական տեսակների, հատկապես թռչունների մոտ:

Հիվանդության կանխարգելման գործում անհրաժեշտ է հաշվի առնել տևական մանրէակրությունը, որը դրսևորվում է էնդոգեն ինֆեկցիայի ձևով և համաճարակը լայն մասշտաբներ է ընդունում էկզոգեն ճանապարհով վարակման դեպքում:

Արցախի Հանրապետության տարածքի բնակլիմայական առանձնահատկությունները հիմնովին նպաստավոր են պաստերելակրության դրսևորման և հիվանդության տեղաճարակային բռնկման համար: Դիտումների արդյունքները ցույց են տվել, որ ինֆեկցիան ապահով տնտեսություններ է ներթափանցում ոչ միայն պաստերեյլոզի հանդեպ անապահով վարչական տարածքներից վարակակիր կենդանիների ներկրումից, այլև հիվանդությունը բռնկվում է տվյալ տնտեսության առողջ մանրէակիրներից: Այս դեպքում նախատրամադրող գործոններ են համարվում ցուրտը, խոնավությունը, անձրևային եղանակները, կենդանիների խնամքի և պահվածքի ցածր մակարդակը: Պաստերեյլոզի նկատմամբ անապահով տարածքների առողջացման միջոցառումների համակարգում անհրաժեշտ է անցկացնել համաճարակաբանական շրջանացում, բացահայտել որոշակի տարածքի տարբեր համաճարակային օջախներում հիվանդության տարբերակված ինտենսիվությունը, հիվանդության տարածման աստիճանը: Այսպիսի հետազոտությունների արդյունքում ուրվագծվում են ոչ միայն ինֆեկցիայի առաջացման, այլև տարբեր ինտենսիվության բռնկումների պատճառները և պայքարի միջոցառումների մեթոդները:

Հիվանդության համաճարակային օջախներում վարակի հետագա տարածումը կանխող կազմակերպչական-տնտեսական և անասնաբուժական-սանիտարական միջոցառումների հետ միասին իրականացվում է հիվանդության հարուցչի վերացմանն ուղղված առանձնահատուկ միջոցների օգտագործում:

Քանի որ պաստերեյլոզը հաճախ արձանագրվում է կենդանիների օրգանիզմի վրա ստրեսային գործոնների ազդեցությունից և հանդես է գալիս որպես երկրորդային հիվանդություն, ուստի տրամաբանական է, որ մշտական համաճարակային օջախները կարող են վերափոխվել գործող անապահով կետերի, որտեղ առկա է ինֆեկցիայի դրսևորման ակնհայտ ձևը: Համաճարակային նման կացության պայմաններում առաջնահերթ խնդիր է համարվում հիվանդ կենդանիների բուժումը հակապաստերեյլոզային գերիմուն շիճուկով և պասիվ իմունացումը հիվանդության նկատմամբ կասկածվող կենդանիների նկատմամբ:

Հաշվի առնելով հիվանդության հարուցչի տեղական շտամների հակաճնային և իմունաձին բարձր ակտիվությունը, ձեռնարկվել է գերիմուն շիճուկի ստացումը խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի պաստերեյոզի նկատմամբ:

1.2. Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների պաստերեյոզի համաճարակաբանական հետազոտության և շրջանացման, խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի պաստերեյոզի հարուցչի տեղական շտամների և գերիմուն շիճուկի ստացման համար մեր առջև խնդիր է դրվել.

- ստանալ խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի պաստերեյոզի հարուցիչների մաքուր աճեցվածք,
- կատարել անջատված մանրէական շտամների շիճուկաբանական տարբերակում,
- ուսումնասիրել պաստերեյոզի տարածվածությունը Արցախի Հանրապետությունում,
- որոշել պաստերեյոզի հարուցչի վարակունակությունը,
- ստանալ հակապաստերեյոզային գերիմուն շիճուկ,
- արտադրական պայմաններում փորձարկել իմուն շիճուկի բուժիչ և կանխարգելիչ ակտիվությունը:

1.3. Աշխատանքի գիտական նորույթը

1. Հետազոտական աշխատանքի արդյունքում Արցախի Հանրապետությունում առաջին անգամ կատարվել է պաստերեյոզի համաճարակաբանական ուսումնասիրություն և բացահայտվել հիվանդության տարածվածությունը,
2. խոշոր եղջերավոր կենդանիներից և խոզերից անջատվել է հիվանդության հարուցիչը, ենթարկվել շիճուկաբանական տիպավորման և որոշվել վարակունակությունը,
3. Ստացվել է բուժիչ և պաշտպանիչ հատկությամբ օժտված հակապաստերեյոզային գերիմուն շիճուկ:

1.4. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի պաստերեյոզի հարուցիչների աճեցվածքների ստացումը:
2. Պաստերեյոզի համաճարակաբանությունը Արցախի Հանրապետությունում: Հիվանդության կրկնման պարբերականությունը:
3. Հիվանդության հարուցչի շիճուկաբանական տարբերակումը և վարակունակության որոշումը:

4. Հակապաստերելյոզային երկարժեք գերինուն շիճուկի ստացումը և նրա բուժ-կանխարգելիչ ակտիվության որոշումը:

5. Պաստերելյոզի հարուցչի շիճուկաբանական տիպերի առանձնահատկությունները:

1.5. Հետազոտության արդյունքների հրապարակումը

Ատենախոսության հիմնական նյութերը գեկուցվել և քննարկվել են «Հարավկովկասյան տարածաշրջանի ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն» միջազգային գիտաժողովում (Երևան 2008):

Ատենախոսության վերաբերյալ կատարված հետազոտությունների արդյունքները հրապարակվել են 5 գիտական հոդվածներում:

1.6. Աշխատանքի գործնական նշանակությունը

Արցախի Հանրապետությունում ուսումնասիրվել է պաստերելյոզի համաճարակաբանական շրջանացումը:

Հիվանդ կենդանիների բուժման և հիվանդության նկատմամբ կասկածվող կենդանիների պասիվ ինունացման համար ստացվել է խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի պաստերելյոզի երկարժեք գերինուն շիճուկ, որը օժտված է բուժիչ և կանխարգելիչ հատկություններով:

1.7. Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը շարադրված է 114 էջի վրա, որը ընդգրկում է ներածությունը, գրականության տեսությունը, սեփական հետազոտությունները, արդյունքների քննարկումները, եզրակացությունները, գործնական առաջարկությունները, գրականության ցանկը: Ատենախոսությունը վերջանում է հավելվածով, որտեղ ներկայացվում են գերինուն շիճուկի արտադրական փորձարկման ակտերը: Հետազոտության թվային տվյալները ներկայացվում են աղյուսակների ձևով:

Գրականության ցանկն ընդգրկում են հայազգի և օտարազգի հեղինակների գիտական աշխատանքների 152 անվանումներ:

2. ՍԵՓԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Հետազոտության նյութերը և մեթոդները

Ատենախոսությանը վերաբերվող փորձարարական հետազոտությունները կատարվել են Հայաստանի պետական ագրարային համալսարանի համաճարակաբանության և մակարածաբանության ամբիոնում, անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության

պրոբլեմային լաբորատորիայում և Արցախի հանրապետական անասնաբուժական լաբորատորիայում

Պատերեկյոզի նկատմամբ Արցախի Հանրապետության տարածքի անապահովությունը հիվանդության տարածվածությունը ըստ առանձին տարածաշրջանների և գյուղական համայնքների ուսումնասիրվել է համաձայնաբարանական հետազոտության մեթոդներով (И.А. Бакулов, В.А. Ведерникова, 1979; И.А. Бакулов, А.А. Глушков, Я.В. Нуйкин, 1984; А.А. Сидорчук, Е.А. Воронин, А.А. Глушков, 2004):

Հանրապետության համաձայնաբարանական շրջանացման համար ուսումնասիրվել են 7 տարածաշրջաններ՝ Ասկերան, Հաղուբ, Մարտունի, Մարտակերտ, Ստեփանակերտ, Եուջի, Եսիումյան: Հիվանդության նկատմամբ ապահով և անապահով համայնքների թվով որոշվել է անապահովության ցուցանիշը տարածաշրջանների մասշտաբներով, ընդ որում հաշվարկները տարվել են 1999-ից մինչև 2007 թվականը: Ըստ նշված տարածաշրջանների, վարակման ինտենսիվությունը բացահայտելու նպատակով անապահովության ցուցանիշը հիվանդության հանդեպ որոշվել է անապահով և ապահով համայնքների թվի հարաբերությամբ, արտահայտած տոկոսներով:

Past. multocida-ի աճեցվածքի ստացման նպատակով օտար կոշոր եղջերավոր կենդանիներից և խոզերից օգտագործվել է սրտի արյունը, լյարդը, փայծաղը, երիկամները: Քանի որ հիվանդությունը սպորաբար ընթանում է սեպտիցեմիայով, բնական է, որ հիվանդության հարուցիչը կարելի է անջատել ցանկացած օրգաններից և հյուսվածքներից Որպես մանրէների սննդամթերք միջավայր օգտագործվել է ՄՊԱ /մսապեպտոնային ագար/ և ՄՊԶ /մսապեպտոնային բուլյոն/, կարծր միջավայրում ցանցերը թերմոստատի 37°C -ի պայմաններում պահվել են 48 ժամ: իսկ հեղուկ միջավայրում՝ 24 ժամ:

Ներքին օրգաններից պատրաստված քսուլցները ներկվել են ըստ Ուոմանովսկու-Գիմզայի: Մանրէների վարակունակությունը որոշվել է ներքին օրգաններից ֆիզիոլոգիական լուծույթում պատրաստված 10%-ոց կախույթով և սննդամիջավայրերում ստացված աճեցվածքներով լաբորատոր կենդանիներին վարակելու միջոցով: Մանրադիտակային հետազոտության արդյունքներով բացահայտվել է պատերեկյանների բնորոշ ձևաբանությունը ներքին օրգաններից պատրաստված քսուլցներում: Այնուհայտ է օվալաձև մանրէների երկբևեռ ներկվածությունը, իսկ արիեստական սննդային միջավայրում դիտվում են մանր բակտերիաների, երբեմն էլ գնդաձև բակտերիաների ձևով:

Խոշոր եղջերավոր կենդանիներից և խոզերից անջատված պատերեկյոզի հարուցիչների հակածնային և իմունածին հատկությունների ուսումնասիրման նպատակով փորձարարական աշխատանքները տարվել են երկու գույն կեց տարեկան կուլերի վրա:

Կենդանիների զերիմունացումը նախ կատարվել է ակտիվագրված պրեցիպիտացված հիդրոքսիդ ալյումինային ֆորմով վակցինայով, այնուհետև ապիտակ մկների օրգանիզմով անցկացված *Past. multocida*-ի վերը նշված

երկու շտամներով: Ընդամենը կատարվել է վարակունակ աճեցվածքների 7 մեարկում, 5-ը ընդմիջումով: Չափաբաժնի ծավալը 100լ-ից հասցվել է 700լ-ի: Հակածինը ներարկելուց 30 օր հետո կենդանիների լծային երակից վերցվել է արյուն, սահմանված կարգով անջատվել շիճուկը և սահածոյացվել կարբոլաթթվի լուծույթով այն հաշվով, որ շիճուկի մեջ կրա խտությունը կազմի 0,5%:

Լաբորատոր քոչոո հետազոտությունները, որոնք կապված են օսլտիկական սարքերի, ստերիլացնող ապարատների, քամիչների, մանրէական աճեցվածքների ստացման, մանրէաբանական, շիճուկաբանական հետազոտության մեթոդների հետ, իրականացվել են „Գոտլաստնտեսական կենդանիների հիվանդությունների մանրէաբանական ախտորոշում“, ծեռնարկի հիման վրա (Н.М. Розанов, 1952):

Փորձարարական հետազոտության տվյալների վիճակագրական մշակման համար օգտագործվել է կենսաչափությունում օտագործվող համապատասխան ծեռնարկները (И.П. Ашмарин, А.А. Воробьев, 1962):

3. ՀԵՏԱԶՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Պատերեչլոզի տարածվածությունը Արցախի Հանրապետությունում և համաճարակաբանական զննատականը

Արցախի Հանրապետության 6 շրջանների համաճարակաբանական հետազոտության արդյունքներով պարզվել է, որ հիվանդության բռնկման հիմնական պատճառը լնդոզեն ինֆեկցիան է, որը դրսևորվում է պատերեչլոզի հիման վրա: Տարբեր սրբեսային գործոններից ընկնում է մակրոօրգանիզմի դիմադրողականությունը, խախտվում մանրէների հետ ունեցած հարաբերական ռավասարակշռությունը, որի արդյունքում ակտիվանում են պայմանական ախտածին մանրէները: Կենդանիների օրգանիզմի ախտադարձանը զուգահեռ դրսևորվում են հիվանդության կլինիկական նշանները: Փաստորեն էնդոզեն ինֆեկցիան բնկվում է ինքնաբերաբար և հիվանդներից արտազատված վարակունակ մանրէներից էկզոզեն ճանապարհով փոխանցման տարաբնույթ գործոններով վարակվում են ընկալունակ առողջ կենդանիները:

Պատերեչլոզի դրսևորման սրբեսային գործոններն են ռամարվել տարաբնույթ հիվանդությունները, անասնաշենքերի հակառանխոտարական վիճակը, օրգանիզմի վրա բացառական ազդեցության միկրոկլիման, կենդանիների խնամքի և պահվածքի պայմանները, ցուրտը, գերտաքացույց, անձրևային եղանակը և այլն: Հիվանդության առաջացմանն ու տարածմանը նախատրամադրող գործոնների բազմազանության հետևանքով համաճարակի ինտենսիվությունը դրսևորվում է լայն տարածումներով: Հայտնի է, որ մեզմ կլիմայի պայմաններում հիվանդությունը արձանագրվում է աշնանը և գարնանը, տատանվելով 1-53%-ի սահմաններում: Արևադարձային երկրներում, անձրևային եղանակներին խոշոր եղջերավոր կենդանիների

պաստերեյլոզի համաճարակի ինտենսիվությունն ու մահացությունը հասնում են 70-100%:

Հիվանդության ախտորոշման ընդհանուր և առանձնահատուկ մեթոդներով հիմնավորվել է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքը գործող և ստացիոնար անապահով է պաստերեյլոզի հանդեպ: Վարակի ինտենսիվությունը, վաղեմությունը, տարածման մասշտաբները, ախտահարված կենդանիների տեսակները, անապահովության բնույթը և բռնկման պարբերականությունը բացահայտելու նպատակով կատարվել է ամբողջ տարածքի համաճարակաբանական շրջանացում: Ուսումնասիրությունները կատարվել են ըստ վարակի տարածման ուժգնության, ինչպես նաև առանձին վարչական շրջաններում ինֆեկցիայի տարբեր ինտենսիվության դրսևորումների առանձնահատկությունների:

Հիվանդության դեմ պայքարի միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով նախընտրվել է հետազոտությունները տեղայնացնել ըստ առանձին վարչական տարածքների: Ընդորում հետազոտության ենթակա ժամանակահատվածի առումով համապատասխան տվյալները արձանագրվել և հետագա մշակման են ենթարկվել երկու փուլերով: Առաջին փուլն իր մեջ ընդգրկել է 1999-ից մինչև 2006 թվականի առաջին կիսամյակը, իսկ երկրորդը՝ 2006թ. երկրորդ կիսամյակը և 2007 թվականը ամբողջությամբ:

Նշված հարցի վերաբերյալ առաջին փուլում ուսումնասիրվել են Ստեփանակերտ քաղաքը, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու և Շահումյանի շրջանները, իսկ երկրորդ փուլում նշված վարչական տարածքներին ավելացել են Հաղարթի և Շահումյանի շրջանները:

Հետազոտության տվյալները ներկայացված են թիվ 1 աղյուսակում: Վերջնական արդյունքի բերված տվյալները ցույց են տալիս, որ հանրապետության 5 տարածաշրջաններից պաստերեյլոզի տեսակարար կշիռն առավել բարձր է Ասկերանի ենթակայության վարչական տարածքում, որը կազմում է 39,6%, այնուհետև որոշակի տարբերությամբ երկրորդ տեղում է Ստեփանակերտը, (32,7%): Համաճարակի գրեթե նույն ինտենսիվությամբ հաջորդ տեղում են Մարտունու, Մարտակերտի և Շուշիի վարչական շրջանները, որտեղ հիվանդության տեսակարար կշիռը ըստ ինֆեկցիայի տարածվածության կազմում է համապատասխանաբար 9,9 և 8,9 -կան %:

Ստեփանակերտը ներկայացվում է մեկ վարչական տարածքով, սակայն բնակավայրերի համեմատությամբ նրա բարձր տեսակարար կշիռը պաստերեյլոզի նկատմամբ պայմանավորված է հանրապետության տարբեր համայնքներից և շրջաններից վաճառքի և այլ նպատակների համար մայրաքաղաք բերվող տարբեր տեսակի կենդանիներով և թռչուններով, կենդանական ծագման մթերքով և հումքով: Ինչ վերաբերվում է մնացած տարածաշրջաններում արձանագրվող պաստերեյլոզի բռնկումների ինտենսիվությանը, ապա նրանցում նույնպես անհամաչափ է հիվանդության հաճախականությունը և բնավ էլ կապված չէ գյուղական համայնքների

թվաքանակից: Այսպես, Ասկերանի տարածաշրջանում վարչական միավորների (համայնքների) թիվը 44-է, իսկ Մարտակերտում՝ 50, սակայն համաճարակաբանական հետազոտության առաջին փուլում ուսումնասիրվող հիվանդության նկատմամբ անապահով կետերի թիվը կազմել է 40, իսկ Մարտակերտում ընդամենը 9, այսինքն անապահովության ցուցանիշը առաջին դեպքում կազմում է շուրջ 91%, իսկ երկրորդ դեպքում՝ միայն 18%: Այս փաստին տալիս ենք կարևոր նշանակություն այն առումով, որ հետազոտությանը բնորոշ պաստերելակրության առկայության դեպքում անհրաժեշտ են վերևում նշված գործոնները ինֆեկցիայի դրսևորման համար:

Աղյուսակ 1

**Պաստերելյոզի տարածվածությունը Արցախի
Հանրապետությունում**

Վարչական տարածք	Անապահով կետերի թիվը ըստ տարիների 1999-2006-ի կիսամյակ								Ընդամենը	Միջին ցուցանիշ	Տեսակարար կշիռը
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006			
	Ը ն դ ա մ ե ն ը										
	%										
Ասկերան	7	5	4	6	5	3	3	7	40	5	39,6
	17,5	12,5	10	15	12,5	7,5	7,5	17,5			
Մարտակերտ	2	2	1	-	-	1	-	3	9	1,1	8,9
	22,2	22,2	11,1	-	-	11,1	-	33,3			
Մարտունի	1	-	-	2	1	3	1	2	10	1,2	9,9
	10,0	-	-	20,0	10,0	30,0	10,0	20,0			
Ստեփանակերտ	1	4	7	8	6	-	4	3	33	4,1	32,7
	3,0	12,1	21,2	24,2	18,2	-	12,1	9,1			
Շուշի	-	2	1	-	2	-	-	4	9	1,1	8,9
	-	22,2	11,1	-	22,2	-	-	44,4			
Ընդամենը	11	13	13	16	14	7	8	19	101	2,5	100
	10,9	12,9	12,9	15,8	13,8	6,9	7,9	18,8			

Համաճարակաբանական շրջանացման տեսակետից որոշակի գնահատանքի է արժանի 2006թ. առաջին կիսամյակի տվյալները, որոնք բացի Ստեփանակերտից, միշտ գերազանցել է մյուս տարիների միջին ցուցանիշները: Հետևաբար Արցախի ամբողջ տարածքը պաստերելյոզի նկատմամբ համարվում է ստացիոնար անապահով, իսկ համաճարակի ինտենսիվության տեսակետից՝ բարձր մակարդակի հիվանդացության գոտի:

3.2. Պաստերելյոզի բռնկման պարբերականությունը

Ստացված տվյալների վերլուծությունը կատարվել է 2006 թ. երկրորդ կիսամյակի և 2007 թվականի հաշվով, որը համարվել է համաճարակաբանական հետազոտության երկրորդ փուլ:

Համաճարակի ակտիվացման հետ կապված հետազոտության իննամյա ժամանակաշրջանի վերջին տարիներին հիվանդության տարածման զանգվածային բնույթի փաստը հատուկ ուշադրության է արժանի այն առումով, որ 1999 թվականից մինչև 2006թ. առաջին կիսամյակը հանրապետության այժմյան տարածքում արձանագրվել է 101 անապահով կետ, մինչդեռ հետագա 18 ամիսների ընթացքում առաջացել է ինֆեկցիայի 50 օջախ: Ինչպես երևում է, վերջին մեկ տարվա ցուցանիշով անապահով կետերի թիվը նախորդ ժամանակաշրջանի միջին տվյալի համեմատությամբ ավելացել է 2,66 անգամ (33,3: 12,5): Յուրաքանչյուր տարվա հետազոտության արդյունքով կարելի է եզրակացնել, որ համաճարակաբանական վերլուծության առավել տևական, առաջին փուլը բնորոշվում է պաստերելյոզի ամենամյա միջին բռնկումներով, որը կազմում է 12,5: Այնինչ շուրջ 5 անգամ ավելի կարճ ժամանակահատվածում՝ երկրորդ փուլում այդ նույն ցուցանիշները ամբողջ հանրապետության մասշտաբով կազմել է 33,3:

Թիվ 2-րդ աղյուսակում բերված համեմատական վերլուծության տվյալները ցույց են տալիս, որ համաճարակաբանական հետազոտության համար ընգրկված բոլոր շրջաններում դիտվել է պաստերելյոզի համաճարակի ակտիվացում հատկապես հետազոտության վերջին տարիներին: Այս փաստը վկայում է, որ պաստերելյոզի նկատմամբ Արցախի Հանրապետությունը համարվում է բարձր ինտենսիվության համաճարակի շրջան, որը բնորոշվում է հետազոտության ենթակա ժամանակահատվածում կամ վերջին տարիներին համաճարակի ընթացքի շարժիչ ուժերի ակտիվացմամբ:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ վերջին մեկ և կես տարվա ընթացքում անապահով կետերի թիվը ավելացել է նվազագույնը 1,95, իսկ առավելագույնը 3, 63 անգամ: Բացի այդ, նոր անապահով կետեր են առաջացել Հաղրութի և Շահումյանի տարածաշրջաններում: Պաստերելյոզի նկատմամբ անապահով կետերի ավելացումը և նախկինում ապահով տարածքներում նոր օջախների առաջացումը համարվում են պաստերելյոզային համաճարակի ընթացքի շարժող օղակների ակտիվության վկայություն: Ի դեպ, հիվանդության նախնական բռնկումները պայմանավորում են երկրորդ կենսաբանական շարժիչ ուժի ակտիվացումը, երբ էնդոգեն ինֆեկցիան սկիզբ է տալիս էկզոգեն վարակի:

Այս առումով ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Մարտակերտի տարածաշրջանում, որը նախորդ փուլի մակարդակը գերազանցել է 3,63 անգամ, այնուհետև Շուշիի 2,45, Ասկերանի-2,40, Մարտունու-2,25 և Ստեփանակերտի -1,95 անգամ: Հաղրութի տարածաշրջանում առաջացել է 5 և Շահումյանի՝ 1 անապահով կետ: Կարճ ժամանակահատվածում 6 անապահով տնտեսությունների հայտնվելով կարելի է գնահատել

համաճարակի ինտենսիվությունը:

Համաճարակի ակտիվացման, տարածքի ստացիոնար անապահովության, հիվանդության առանձնահատուկ կանխարգելման միջոցների բացակայության և բազմաթիվ այլ անբարենպաստ գործոնների ազդեցության ցուցանիշ է համարվում կենդանիների հիվանդության կրկնման հաճախականությունը և պարբերականությունը, որով հետազոտության փուլային տվյալները որոշակիորեն ուրվագծվում են միմյանցից: Այսպես, վերջին մեկ տարվա տվյալներով պաստերելյոզի պարբերականությունը ամբողջ հանրապետության մասշտաբով կազմել է 0,66-ից 12, որոնք միմյանցից տարբերվում են ավելի քան 18 անգամ, իսկ միջին հաշվով այն կազմում է 4,76: Ասկերանում, Ստեփանակերտում և Մարտակերտում նշված տվյալը համապատասխանաբար հետևյալն է 12; 8; 4: Կասկած չկա, որ նշված վերլուծական տվյալները պայմանավորում են լայնամասշտաբ պաստերելակրությունը կենդանիների մեջ, դրա հետ կապված ստացիոնար անապահովությունը և կանխարգելիչ միջոցառումների ցածր մակարդակը:

Աղյուսակ 2

Պաստերելյոզի նկատմամբ անապահով կետերի դինամիկան Արցախի Հանրապետության տարածաշրջաններում (1999-2007 թթ)

Տարածաշրջաններ	Անապահով կետեր (միջին ցուցանիշ)		Անապահով կետերի աճը	Համաճարակի հաճախականությունը վերջին տարիներին (հանրապետության ցուցանիշը) հարաբերական ցուցանիշները
	1999-12006թ. առաջին կիսամյակ	2006թ. երկրորդ կիսամյակ 2007թ.		
Ասկերան	40-5	18-12	2,4	5:12
Հաղրուք	-	5-3,3	նոր անապահով կետեր	0:3,3
Մարտակերտ	9-1,1	6-4	3,63	1,1:4
Մարտունի	10-1,2	4-2,7	2,25	1,2:2,7
Ստեփանակերտ	33-4,1	12-8	1,95	4,1:8
Շուշի	9-1,1	4-2,7	2,45	1,1:2,7
Շահումյան	-	1-0,66	նոր անապահով կետեր	0:0,66
Ընդամենը	101-12,5	50-33,3	2,66	12,5:33,3

Ըստ շրջանների անապահովության ցուցանիշի, վերլուծականը ներկայացվում է թիվ 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

**Պաստերելյոզի նկատմամբ անապահովության ցուցանիշը
Արցախի Հանրապետությունում**

Շրջաններ	Ընդամենը բնակավայր	Նրանցից անապահով են	Անապահովության ցուցանիշը %
Ասկերան	44	40	90,9
Մարտակերտ	50	9	18,0
Մարտունի	37	10	27,0
Հադրութ	40	5	12,5
Շուշի	10	9	90,0
Շահումյան	15	1	6,7
Ընդամենը	196	74	37,7

Ստացված տվյալների համաձայն հանրապետության շրջանների 196 բնակավայրերից (գյուղական համայնքները) պաստերելյոզի նկատմամբ անապահով են ճանաչվել 74, որը ըստ անապահովության ցուցանիշի կազմում է 37,7%: Քանի որ անապահովության ցուցանիշը հաշվարկվում է ըստ տարածաշրջանների գյուղական բնակավայրերի, այդ կապակցությամբ Ստեփանակերտ քաղաքը չի մտցված այդ հաշվարկի մեջ, որտեղ հետազոտության 9 տարիների ընթացքում արձանագրվել է 33 դեպք: Առավել բարձր ցուցանիշ է ստացվել Ասկերանի շրջանի անապահով տնտեսությունների նկատմամբ, որը կազմել է 90,9%: Շրջանի 44 բնակավայրերից 40-ը համարվել են անապահով: Չնայած Շուշի բնակավայրերի թիվը ընդամենը 10 է, սակայն նրա 90,0%-ը ճանաչվել է անապահով: Հաջորդ տեղերը զբաղեցնում են Մարտունու, Մարտակերտի և մյուս շրջանները:

Սեզոնայնության ուսումնասիրման տվյալները ցույց են տալիս, որ Արցախի Հանրապետության տարբեր շրջաններում պաստերելյոզի բռնկումների վրա սեզոնը չի ցուցաբերում միանշանակ ազդեցություն: Հետազոտության 9 տարվա միջին տվյալներով Ասկերանի վարչական

տարածաշրջանում հիվանդության նկատմամբ անապահով կետերի թիվը առավել բարձր է եղել 3-րդ եռամսյակում (31,9%), իսկ Ստեփանակերտում ինտենսիվությունը բարձր է եղել 4-րդ եռամսյակում (39,6%): Մարտկերտում բարձր ցուցանիշ է արձանագրվել 3-րդ եռամսյակում (45%), Մարտունիում առաջին և երրորդ եռամսյակներում (29,1-ական տոկոս): Առավել բարձր տվյալ է արձանագրվել Շուշիի տարածաշրջանում 2007 թվականի առաջին եռամսյակում (47,4%) :

Հաղորթում արձանագրվել է 7 անապահով կետ, որի 62,5%-ը բաժին է ընկնում 4-րդ եռամսյակին: Նույն թվականի 2-րդ եռամսյակում Շահումյանում ընդամենը գրանցվել է 1 անապահով կետ: Բերված տվյալների վերաբերյալ ընդհանուր եզրակացությունն այն է, որ նշված եռամսյակներին անխուսափելի են այնպիսի ստրեսային գործոնները, ինչպիսիք են ցուրտը, անձրևները, ինչպես նաև միջատների բազմացման և նրանց միջոցով պաստերելաների տարածման հնարավորությունը:

Եթե վերլուծության ենթարկենք առանձին տարիների տարբեր եռամսյակներում ստացված տվյալները, ապա ակնհայտ է, որ տարբերվում են 9 տարվա միջին ցուցանիշներից: Այսպես, 1999թ. Ասկերանի տարածաշրջանում սեզոնային բռնկումները ավելի ինտենսիվ են արտահայտվել առաջին և 3-րդ եռամսյակներում (42,8%), նույնը և 2000թ. 3-րդ եռամսյակում, 2001թ-ի 4-րդ, 2003թ-ի 3-րդ և 4-րդ, 2004թ առաջին և 4-րդ, 2005թ առաջին, 2006թ 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

Ինֆեկցիոն հիվանդությունների սեզոնային առանձնահատկությունների և դրսևորումների տարբերակված բացահայտումը, դա կլինի հողային, բնական օջախային, բնակլիմայական պայմանների հետ կապված, կարևորվում է համաճարակի կարճաժամկետ կանխարգելման համար, երբ անհրաժեշտություն է առաջանում այս կամ այն վարակի նկատմամբ որոշելու կենդանիների պատվաստումների ամենահարմար և բարենպաստ ժամկետները: Քանի որ սեզոնայնության վրա ազդող կազմակերպչական-տնտեսական և բնա-աշխարհագրական պայմանները միատեսակ չեն արտահայտվում ուսումնասիրվող տարածքի տարբեր գոտիներում, ուստի բնակլիմայական տարբեր գոտիների համաճարակաբանական ուսումնասիրությունը ձեռք է բերում գործնական նշանակություն:

3.3. Պաստերելյոզի հարուցիչ տարբեր շտամների շիճուկաբանական տարբերակում

Հակամարմինների տիտրի բացահայտման նպատակով, հակածնի յուրաքանչյուր ներարկումից (գերիմունացումից) առաջ վերցվել է արյուն և երկու գործակցով շիճուկը նոսրացվել 1:5-1:320: Ուշագրավ է, որ հիվանդության հարուցիչի ակտիվագրկված հակածնով ներարկման դեպքում չի արձանագրվել յուրահատուկ հակամարմինների առկայություն արյան շիճուկում, այնինչ վիրուլենտ մանրէներով վարակման 7-րդ օրը նշվել է հակամարմինների բարձր տիտր (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Պաստերելլոզի նկատմամբ գերիմունացված ճագարների արյան շիճուկի ազլյուտինինների տիտրը

Շտամ	Ճագարների խմբերը													
	1							2						
	1:5	1:10	1:20	1:40	1:80	1:160	1:320	1:5	1:10	1:20	1:40	1:80	1:160	1:320
1	++	++	++	++	++	++	++	++	++	+	+	+	+	-
	++	++	++	++	++	+	+	+	+	+	+	+	-	-
2	++	++	++	++	+	+	-	++	++	+	+	+	-	-
	+	+								+	+	+	+	-
3	++	++	++	++	+	-	-	++	++	+	+	+	+	-
	+	+												

Ծանոթություն.

- ++++ 100% ազլյուտինացիա
- +++ 75% ազլյուտինացիա
- ++ 50% ազլյուտինացիա
- + 25% կասկածելի
- կասկածելի
- բացասական

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ պաստերելաների ուսումնասիրվող բոլոր 3 շտամները միմյանցից տարբերվում են հակածնային հատկությամբ, ընդ որում ազլյուտինացնող հատկությունը առավել արտահայտված է մանրէների առաջին շտամի հանդեպ: Եթե սպանված մանրէների աճող չափաբաժիններով քառանվագ մշակման դեպքում օրգանիզմը հակազդում է փորձարկվող շտամների հանդեպ դրական ցուցանիշից ցածր ազլյուտինացիոն տիտրով, ապա վարակման արդյունքում պատասխանում է հակամարմինների այնպիսի բարձր տիտրով, որ անգամ արյան շիճուկի 1:80-ի նոսրացման դեպքում փորձարկվող հակածինը ամբողջությամբ սոսնձվում է մեծաքանակ ազլյուտինինների միջոցով, այսինքն ապահովում է 100% ազլյուտինացիա: Հաջորդ, կրկնապատիկ և քառապատիկ նոսրացումները նույնպես ապահովում են դրական ցուցանիշով տիտրից բարձր ազլյուտինացիա: Մեր հետազոտություններում նման բարձր ցուցանիշ՝ 75% ազլյուտինացիա է դիտվել արյան շիճուկի 1:160 և 1:320 նոսրացումների դեպքում: Այս փաստը համարում ենք օրգանիզմի իմունաբանական բարձր հակազդման դրսևորում *Past. multocida*-ի նկատմամբ:

Երկրորդ խմբի ձագարների արյան շիճուկի ազլյուտինացիայի տվյալները վկայում են, որ այդ ցուցանիշը կախված է ոչ միայն հակածնային ակտիվությունից, այլև պատերեչյաների վարակունակության աստիճանից: Հիվանդության հարուցչի երկրորդ շտամի թույլ հակածնային հատկությունը որոշակիորեն անդրադառնում է երկրորդ խմբի ձագարների օրգանիզմի իմունոլեյնաբանական պատասխանի վրա, որոնք նախօրոք գերիմունացվել են նշված շտամի սպանված, այնուհետև վարակունակ մանրէներով: Լորկայացված տվյալների համաձայն, երկրորդ շտամով նշակված երկրորդ խմբի ձագարների արյան շիճուկում չի առաջանում սպասվելիք լարձո տիտրով ազլյուտինիններ, ինչպես առաջին և երրորդ շտամներով իմունացված առաջին խմբի ձագարների օրգանիզմում: Այսպես, առաջին խմբի ձագարների արյան շիճուկը 1:40 նոսրացման դեպքում ազլյուտինինների տիտրը ըստ առաջին, երկրորդ և երրորդ շտամների 100, 50 և 50% , մինչդեռ 2-րդ խմբի ձագարների արյան շիճուկում համապատասխանաբար 25%, որը անհամեմատ զիջում է նախորդ խմբի կենդանիների համանուն ցուցանիշներին:

3.4. Արյան շիճուկի պաշտպանիչ հատկության որոշումը պատերեչյուղի դեպքում

Օրգանիզմի խորը իմունոլեյնաբանական վերակառուցումների վկայությունն այն է, որ տարբեր շտամների միաժամանակյա համատեղ ներարկումը չի առաջացնում հակածիճների մրցակցություն, դեռ ավելին, լարված վարակամբժում է ձևավորվում ոչ միայն դամածին, այլ նաև տարածին մանրէական շտամների հանդեպ: Ատուզիչ վարակման արդյունքում առանց խախտ, վարակմանը ընդդեմ ջերմային հակազդում չի առձանազրվել վարակունակ շտամների նկատմամբ:

Վարակելուց 10 օր հետո, ձագարներից վերցրել ենք արյուն և որոշել շիճուկի պաշտպանիչ հատկությունը սպիտակ մկների վրա: Արյան շիճուկի պակիվ իմունիտետի սկզբունքով այդ հատկությունը որոշվել է անհատական և խմբակային եղանակով:

Շտապզոտությունները տարվել են համանմանության սկզբունքով 8 խմբի բաժանված 40 մկների վրա:

Աղյուսակ 5
Պատերեցողի նկատմամբ գերիմունացված ձագարների արյան շիճուկի պաշտպանիչ հատկությունը մկների վրա

Վեճակները	Մկների թիվը	Վետվարակալին անվան ժամկետները (օրերով)								Ընդամենը տատկել են	Մնացածն %	Կյանքի միջին տևողությունը	Չմեռածի պաշտպանիչ ցուցիչ	Մնացել են կենդանի	% վերջին օրը մեռածների %
		1	2	3	4	5	6	7	8-10						
1	5	-	-	-	-	-	-	-	-	1	20	7	2,85	4	80
2	5	-	-	-	-	-	-	-	-	-	0	-	-	5	100
3	5	-	-	-	-	-	-	-	-	-	0	-	-	5	100
4	5	-	-	-	1	-	1	-	-	2	40	5	8	3	60
5	5	-	-	-	1	-	-	-	-	1	20	4	5	4	80
6	5	-	-	-	-	-	-	-	-	-	0	-	-	5	100
7	5	-	-	-	2	1	1	-	-	4	80	4,75	16,5	1	20
8	5	-	-	-	3	2	-	-	-	5	100	4,4	22,7	0	0

Ստացված տվյալները վկայում են, որ մեր կողմից անջատված *Past multocida*-ի 3 շտամները օժտված լինելով ինունաթին հատկությամբ, ձագարների ինունացման և գերիմունացման արդյունքում մեախորվում է հուսալի վարականքով: Բացի ըստ հերթականության 4-րդ ձագարից, որի արյան շիճուկը սպիտակ մկներին անկունից պաշտպանել է միայն 60%-ով, մնացած 4 ձագարների արյան շիճուկը ցուցաբերել է 80-100% պաշտպանիչ ակտիվություն պատերեցանքի նշված շտամներով եռապատիվ 100% մահացու չափաքանով վարակման դեպքում: Այդպիսի արդյունքներին հույժ կարևոր նշանակություն ենք տալիս այն առումով, որ պատերեցողի դեպքում ձագարը համարվելով խիստ ընկալունակ կենդանի, ինժեկցիան արտահայտվում է ծանր համաճարակի և կարճ ժամանակահատվածում գանգվածային անկումներով: Այս տեսակետից ակնհայտ է տվյալ կենդանական տեսակի ինտենսիվ գերիմունացումը և արյան շիճուկում հումորալ հակամարմինների բարձր տիրույթը, որի ապացույցը սպիտակ մկների դիմակայումն է բազմանվագ մահացու չափաքանի նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ախտորոշման առանձնահատուկ մեթոդներով բացահայտվել է, որ Արցախի Հանրապետության ողջ տարածքը անապահով է պաստորելյոզ հիվանդության նկատմամբ: Ինֆեկցիայի տեսակարար կշիռն առավել բարձր է Ասկերանի տարածաշրջանում: Կազմելով 39,6%, հաշորդ տոկոսը 32,7 և 9,9%-ով զբաղեցնում են Ստեփանակերտը և Մարտունին, իսկ Մարտակերտը և Շուշին 8,9-կան տոկոսով զբաղեցնում են վերջին տոկոսը:

2. Համաճարակաբանական հետազոտության ենթակա ժամանակահատվածում Ասկերանի տարածաշրջանը համարվել է համաճարակաբանական թարձր ինտենսիվության տարածք, որտեղ պաստորելյոզի անապահովության ցուցիչը կազմել է 91%: Հիվանդության զանգվածային տարածման բարձր ցուցանիշ է արձանագրվել նաև Շուշիում, ընդգրկելով վարչական տարածքների (քնակավայրերի) 90%: Մարտունու և Մարտակերտի գյուղական համայնքների անապահովության ցուցիչը համապատասխանաբար կազմել է 27 և 18%:

Հանրապետության շրջանների 196 գյուղական համայնքներից գործող և բարձր անապահով են ճանաչվել 74-ը, որը կազմում է շուրջ 37,7%:

3. Պաստորելյոզի տարածվածության ծավալների բացահայտման առաջին փուլի (1999-2006թթ) համեմատությամբ, 2006-2007թթ ընթացքում տարածաշրջաններում անապահով կետերի թիվը նվազագույնը ավելացել է 1,96, իսկ առավելագույնը՝ 3,63 անգամ:

4. Պաստորելյոզի սեզոնային դրսևորումներին նպաստում են ցուրտը, անձրևային եղանակները, տրանսմիսային գործոնները և այլ ստրեսային ազդակները: Հետազոտության 9-ամյա միջին ցուցանիշներով Մարտունու տարածաշրջանում ինֆեկցիայի նկատմամբ անապահով կետերի թիվը առավել բարձր է եղել 3-րդ եռամսյակում (45%), իսկ Ասկերանում 31,9%: Մյուս տարածաշրջանները առանձնացվում են տարբեր եռամսյակներով:

5. Պաստորելյոզի համաճարակաբանական շրջանացման տվյալներով հետազոտության ենթակա ժամանակաշրջանում, հատկապես վերջին տարիներին արձանագրվել է բարձր ինտենսիվության համաճարակի ընթացք: 2006թ երկրորդ կիսամյակից մինչև 2007թ վերջը Արցախի տարածքում հիվանդության տարեկան պաստորելակրությունը կազմել է 33,3 մախորդ տարիների 12,5-ի փոխարեն: Արցախի բարձր աստիճանով հիվանդացությունը համարվում է հիվանդացած-առողջացած և առողջ կենդանիների պաստորելակրության հետևանք:

6. Խոշոր եղջերավոր կենդանիներից և խոզերից անջատված *pestourella multocida*-ի շտամները օժտված են հակածնային և բարձր իմունածին հատկությամբ: Արանցով բազմանվագ իմունացված ճագարները և խոշոր եղջերավոր կենդանիները հումորալ հակամարմինների բարձր տիտրերով վարակամեղծում են ձեռք բերում, որոնց արդյան շիճուկը ապիտակ մկներին անկումից պաշտպանում է 80-100%-ով:

7. Գերիմունացված խոշոր եղջերավոր կենդանիներից ստացված արյան շիճուկը օժտված է պաստերեյլոզով հիվանդ կենդանիների բուժմամբ և վարակման մեջ կասկածվողների մոտ պասիվ վարակներժում առաջացնելու հատկությամբ:

Pasteurella multocida-ի երկվալենտ շտամով գերիմունացված ճագարների արյան շիճուկում կուտակվում են ագլյուտինինների այնպիսի քանակություն, որ 1:320 նոսրացումից հետո դեռևս 75%-ով սոսնձում է ակտիվազրկված պաստերելաներին, իսկ 1:180 նոսրացման դեպքում այդ երևույթը դրսևորվում է 100%-ով:

ԳՐԹՏԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով խոշոր եղջերավոր կենդանիներից և խոզերից անջատված *Pasteurella multocida*-ի բարձր իմունածին հատկությունը, առաջարկվում է կազմակերպել գերիմուն շիճուկի սերիական արտադրություն և Արցախի հանրապետությունում այն օգտագործել պաստերեյլոզով հիվանդ կենդանիների բուժման, իսկ առողջներին՝ ինֆեկցիայի կանխարգելման նպատակներով:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. Գրիգորյան Ս.Լ., Մուսայելյան Ն.Ա.- Գյուղատնտեսական կենդանիների պաստերեյլոզի տարածվածությունը Արցախի Հանրապետությունում. // Ագրոգիտություն, 2007, 3-4, էջ 155-158
2. Григорян С.Л., Оганесян М.А., Мкртчян А.Р., Цатурян Л.Г., Мусаелян Н.А. Серологическая идентификация некоторых штаммов пастерелл. // Известия аграрной науки, Тбилиси, 2007, т. 5., N2 с. 75-76
3. Գրիգորյան Ս.Լ., Հովհաննիսյան Մ.Հ., Սարգսյան Մ.Ա., Մկրտչյան Ա.Ռ., Մուսայելյան Ն.Ա. Պաստերեյլոզի հարուցչի շիճուկաբանական տիպերի առանձնահատկությունները // Գիտություն և տեխնիկա, Երևան, 2007, N10, էջ 10-14:
4. Մուսայելյան Ն.Ա. Պաստերեյլոզի հարուցչի տարբեր շտամների վարակունակությունը: // ՀՊԱՀ-ի անասնաբուժական ֆակուլտետի 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու՝ Երևան, 2008, էջ 44-46:
5. Мусаелян Н.А., Григорян С.Л. Периодичность вспышек пастереллеза в НКР // Известия ГАУА, 2008, N2, с. 59-61

Мусаелян Норайр Агабекович
Изучение эпизоотологии пастереллеза в Республике Арцах

Резюме

Эпизоотические проявления пастереллеза отличаются целым рядом особенностей, связанных с явлениями здорового пастереллоносительства и реконвалесценции. В связи с этим данная болезнь часто проявляется не только вследствие попадания возбудителя болезни в организм животного экзогенным путем, но и вспышкает, в качестве эндогенной инфекции. Предрасполагающим условием для возникновения и распространения пастереллеза в обоих случаях является наличие факторов, отрицательно влияющих на сопротивляемость организма сельскохозяйственных животных, в том числе и классические инфекционные болезни, на фоне которых, не редко, проявляется пастереллез.

В отличие от зоологической классификации серологическая идентификация *Pasteurella multocida* является важным обстоятельством для изучения эпизоотического распространения болезни среди животных разных видов.

В результате эпизоотологического исследования установлено, что в целом Республика Арцах неблагоприятна по пастереллезу и содержит множество действующих очагов болезни. Из девяти исследованных административных территорий наиболее неблагоприятным оказался Аскеранский район, где удельный вес инфекции составил 39,6, а показатель неблагоприятия 91%. Из 195 сельских общин республики признаны неблагоприятными 74.

Данные эпизоотологического районирования свидетельствуют о том, что по сравнению с первым этапом исследований (1999-1 полугодие 2006 г.г.) во втором этапе (2 полугодие 2006-2007 г.г.) количество неблагоприятных общин увеличилось с 1,95 до 3,65 раза. За счет разных форм пастереллоносительства среди сельскохозяйственных животных количество неблагоприятных общин выросло от 12,5 до 33,3, что считается фактом массового распространения болезни.

Учитывая, что при разработке противоэпизоотических мероприятий важное значение отводится изучению сезонности заболевания, нами было выявлено, что по показателям девятилетнего исследования особенно выраженной сезонностью отличается Мартунийский район, где количество неблагоприятных пунктов в третьем квартале составило 45%, а то время как в Аскеранском районе, например, тот же показатель составил всего 31,9%. Двухвалентная сыворотка, полученная от животных, гипериммунизированных двумя серотипами пастерелл, обладает выраженными превентивными свойствами, защищая от гибели зараженных вирулентными штаммами пастерелл белых мышей на 80-100%. Агглютинационный титр антител в сыворотке составляет 1:80-1:360, что обеспечивает агглютинацию пастерелл в 100-75% случаев. В производственных условиях указанный биопрепарат обладает лечебно-профилактической активностью при геморрагической септицемии крупного рогатого скота.